

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՐԵԿԱՑՈՒ ԶԱՓԱԾՈՅԻ ՌԻԹՄԸ ԵՒ ՏԱՂԱԶԱՓԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ա. Ազատ եւ Կանոնաւոր Ուսանաւորների տաղաչափական Զեւերը

Այսօր մեզ համար տաղաչափական տեսակետից ոչ մի տարբերութիւն չկայ երկվանկ պայծառ, վայրի, տաճար, ծաղիկ վանկերի արտասանական տեւողութեան միջեւ: Ուսանաւորի մէջ նրանք կազմում են հաւասար անդամներ: Մինչդեռ հին քերականները դրանք համարել են արտասանական տարբեր տեւողութիւն ունեցող վանկերից բաղկացած բառեր: Յունարեւմտ յատուկ կարն եւ երկար ձայնաւորներով պայմանաւորուած վանկերի քննարկը նրանք տարածել են հայերէնի վրայ: Այսպէս էլ մեզ համար տարբերութիւն չկայ եռվանկ մարգարիտ, ծովային, համարձակ, գեղեցիկ, բազմազան, առատ, Իսահակ, Յովհաննէս բառերի վանկերի արտասանական տեւողութեան միջեւ: Մինչդեռ այդպէս չէր հին քերականների համար: Այդ բառերը կազմել են տեւողութեամբ տարբեր ոտներ: Ուրիշ միւսեր համարուել է ամանակը՝ մէկ կարն վանկի արտասանական տեւողութիւնը: Երկու կարն վանկերից բաղկացած ոտը համարել են մէկ երկար վանկի հաւասար: Հայ քերականները մեզ են աւանդել թէ՛ երկվանկ եւ թէ՛ եռվանկ ոտների անունները, որոնք զուգորդուած են նրանց կարն եւ երկար վանկերից: Ըստ այդմ երկվանկ ոտը կարող է բաղկացած լինել երկու երկար վանկից եւ դառնալ քառամանկ: Երկու երկար վանկից բաղկացած քառամանկ ոտը կոչուել է Համարյր: Երկու կարն վանկից բաղկացած երկամանկ ոտը կոչուել է անգայտ: Մէկ երկար եւ մէկ կարն վանկերից բաղկացած ոտը կոչուել է մեծասար եւ հանդէս է եկել

որպէս եռամանկ: Մէկ կարն եւ մէկ երկար վանկերից բաղկացած ոտը կոչուել է մեծակերց եւ նոյնպէս եղել է եռամանկ: Այսպէս էլ կարն եւ երկար վանկերի ութ զուգորդութիւններ ունեն եռվանկ ոտները: Եթէ երեք կարն վանկերից բաղկացած ոտը համարուել է եռամանկ, ապա երեք երկար վանկերից բաղկացած ոտը համարուել է վեցամանկ: Զմանքամասնելով՝ նշեմ միայն եռվանկ ոտների անունները՝ ստեղծ, վերջաւանջ, բողոքոր, բողոքոտ, հաւեղ, աւարտեղ, նեղեղ եւ սոնք, որոնք կարող են լինել թէ՛ եռամանկ եւ քառամանկ, թէ՛ հինգամանկ եւ վեցամանկ: Ահա թէ ինչու հայոց հին տաղաչափական համակարգը պէտք է տարբերակել վանկական տաղաչափութիւնից:

Այսօրուայ տեսակներէց Կոմիտաս կաթողիկոսի Հովսէփիանց շարականը կարող է համարուել տաղաչափորէն թերի: Շարականի տողը հիմնականում գրուած է եռվանկ չորս անդամներով՝ «Թուլացան կորովիք հաստածից աղիղանց», բայց այս կանոնաւորութիւնը խախտուած է յաճախ.

Կանա՛յք պատուականք՝ քաղա՛տա եւ ազգա՛ւ

Վաճառականք առա՛տք անյա՛յտ մարգարտին,||

Եղին գանձի՛նըս գրաւականըս բազմաց,||

Եւ եղեն վերական՛ք անծանօթ աշխարհին:(18)||

Վանկերն անհաւասար են, բայց շարականն անթերի է ամանակների տեւողութեամբ: Տողը կարող է բաղկացած

լինել մէկ աւելի անդամներից: Հայոց հին քանաստեղծութեան ռիթմական միաւորի հիմքը դառնում է անդամը եւ այն էլ ոչ թէ վանկերի քանակային հաւասարութեամբ, այլ այդ վանկերի ամսականների հաւասարութեամբ: Սա վերաբերում է Գողթան երգերից եւ հին շարականներից սկսած մինչեւ Գրիգոր Նարեկացու չափածոյ այն բոլոր գործերին, որոնք չեն գրուած տողերի մէջ հաւասար վանկաբանակով: Ռիթմը կանոնաւորում է սուղ եւ երկար անդամների առոգանութեան շնորհիւ: Շեշտն այստեղ եւս նույն ազատ կանոնաւորութիւնն ունի, ինչպէս վանկական ոտանաւորի մէջ:

Առաջին հեղինակը, որի կարծիքով հայկական տաղաչափութիւնը ամսականային է՝ հիմնուած կարն եւ երկար ձայնաւորների բնոյթի վրայ, եղել է Մրոզերը: (19) Նրան առարկել է Արսէն Բագրատունին: Նա Հայերէնը համարել է տաղաչափական վանկական համակարգին պատկանող լեզու, ինչպէս Ֆրանսերէնը, ընդգծելով սակայն, որ Հայերէն ոտանաւորի անդամատութիւնը կախուած է շեշտից. «Անդամքն վասն շեշտին են, եւ շեշտին քաժանին»: (20) Նա չի անդրադարձել տարբեր անդամների խառը կիրառութիւն ունեցող անկանոն չափերով ոտանաւորներին: Թէեւ ռիթմական կանոնաւորութեան պայմանը Արեղեանը եւս համարում է վանկերի ծանր կամ արագ արտասանութիւնը, քայց մի էական կէտում համաձիտ չէ Բագրատունու հետ: Ըստ Բագրատունու՝ կարն անդամի վերջին վանկը չէ, որ երկար է արտասանում, այլ նախորդ անդամների վերջն է երկարացում: Ըստ Արեղեանի՝ երկարում է կարն անդամի վանկը: «Անձիւնք» նուիրեալ սիրոյն Քրիստոսի» տողի մէջ ընդգծուած բառը չունի նախորդ բառ: Երկվանկ է, քայց ռիթմի պահանջով արտասանում է երկար՝ ամսականով հաւասարուելով եռավանկ անդամին: Սա, ըստ իս, պէտք է ընդունել

անվերապահօրէն եւ դիտել որպէս հայոց հին տաղաչափական համակարգի էական յատկանիշներից մէկը: Կապուած է սա երկար կամ կարն ձայնաւորի բնոյթի հետ, – դժուար է ասել, քանի որ ընդունուած է, թէ հայոց լեզուն չունի բնութեամբ կարն եւ երկար ձայնաւորներ: (21) Ակնհայտ է, սակայն, որ սուղ են համարում ը ձայնաւորով այն վանկերը, որոնք կարելի է ըստ հարկի կարդալ կամ չկարդալ: Այսպէս էլ քաղածայնով վերջացող բառերի յոգնակի ուղղականի ք եւ հայցականի ք տառից առաջ ը ձայնաւորը կարող է եւ սղուել, եւ վանկ համարուել՝ ըստ անհրաժեշտութեան: Այսպէս՝ արքեպալք կամ արքեպալ, արքեպալս կամ արքեպալս: Այնուհետեւ, անդամի մէջ բառասկզբի կամ բառավերջի սուղ վանկը կարող է վերանալ՝ ձուլուելով նախորդ բառի կամ յաջորդի վանկին: Այսպէս՝ «Սեռից–ն ընթաց բիւրուց–ն իջեալ» (ԳՆՏԳ, 67):

Ը ձայնաւորը սղել են նաեւ ք, դ, ց յօդերից առաջ կամ ըստ հարկի համարել են վանկարար: Նմանապէս եւ ց նախդիրի դէպքում: Այս բոլոր դէպքերում ռիթմական հաւասարութիւն ստեղծելու համար բազմավանկ անդամները արտաբերում են դանդաղ եւ երկարացնելով, իսկ բազմավանկ անդամները՝ արագ եւ սղելով: «Բնական արտասանութեամբ էլ արդէն բազմավանկ բառերը համեմատաբար աւելի արագ են արտասանուում, քան կարն բառերը – գրել է Արեղեանը – մանաւանդ մեր լեզուի մէջ, որի բառերը միայն մէկ շեշտ ունեն, եւ շեշտներն էլ ընկնում են վերջին վանկի վրայ. համեմատել՝ փառք, փառքի, փառաւոր, փառաւորել, փառաւորութիւն: Որքան մեծանում է բառը, այնքան, վերջին վանկի վրայ ընկնող շեշտի ազդեցութեամբ, աւելի արագ ենք անցնում նախորդ վանկերի վրայով, այնպէս որ քանական խօսուածքի ժամանակ քառավանկ փառաւորել բառը ոչ թէ չորս անգամ աւելի երկար է, քան

միավանկ փառք, եւ ոչ էլ երկու անգամ աւելի երկար, քան երկվանկ փառքի բառը, այլ աւելի պակաս» (22): Շարականների մէջ կարճ անդամների հաւասարեցման մի դէպք էլ նշում է Աւետիս Բահաթրեանը. «Երբեմն մի քողորովին աւելորդ և ծայր եմ վերադիր անում, ինչպէս՝ և աստըված, և անարատ եւ այլն» (23):

Նարեկացին ունի տաղեր, որոնց մէջ հետեւեղականօրէն պահպանւում է անդամների ամանակային հաւասարութիւնը: Ահա «Տաղ սրբոց Քառասնից եւ այլ վկայից» բանաստեղծութիւնը: Տաղի բանակապը յօդում է «Գրիգորի է երգս այս»՝ Նշանակում է՝ երաժշտութեան առումով տաղը պէտք է ունենայ կանոնաւոր դիրք: Ոտանաւորի տողը քաղկացած է եռանդամ 13 վանկից՝ 5+4+4 չափով, այսպէս՝ «Ողորմ աղետիւ կողկողագին պաղատանաւ»: Սակայն այս կանոնաւորութիւնը պահպանելու համար անհրաժեշտ է իսկապէս մի քանի բազմավանկ բառեր արտասանել արագ՝ սղելով և գաղտվանկը եւ, ընդհակառակը, անդամների հաւասարութեան պահպանման համար՝ երկարացնել միավանկ բառերը: Ահա մի տուն այդ տաղից.

*Ի կիրս մարմնոյ ի կենակից մեր
բնութենէսլ*

*Ելին ի յերկինս, խառնեալ ի
գաւրս երկնաւորացն.//*

*Երեւելապէս յայտնի քարոզք
տիեզերաց.//*

*Տաւնք հրեշտակաց ի մատենի
կենաց գրեալ:*

(ԳՆՏԳ, 79)

Բնութենէս բառը քառավանկ է, մինչդեռ բանաստեղծական տողի մէջ՝ եռավանկ, Ելին ի յերկինս, խառնեալ ի գաւրս երկնաւորացն տողը վանկաբաժանմամբ ունի 6+5+5 եռանդամ կառուցուածք, մինչդեռ դիրքի պահանջով գաղտնավանկների սղմամբ հաւասար է

5+4+4 չափի: Տաւնք միավանկ բառը տաւնք երկարացմամբ դարձել է երկվանկ եւ այլն: Անդամների ամանակային հաւասարութեան պահպանման համար Նարեկացին առաջնորդում է երեք վանկերի հետ կատարուող փոփոխութեամբ. կարճ անդամը կարելի է դարձնել բազմավանկ՝ եռավանկ եւ, ընդհակառակը՝ բազմավանկը սղել նոյնքան:

Աւետիս Բահաթրեանը տողերի մէջ հաւասար անդամներ ունեցող ոտանաւորները անուանել է համաչափ ոտանաւոր: Դժուար չէ հաճախել համաչափ ոտանաւորը: Թէեւ նրա հիմքը վանկերի հաւասարութիւնն է, բայց առանձին դէպքերում այդ հաւասարութիւնը կանոնաւորում է սուղ եւ երկար վանկերի արտաբերման շնորհիւ: Նարեկացին ունի մի շարք համաչափ ոտանաւորներ: Ահա մի քանի «Աւետիս, մեծ խորհրդոյ» սկսուածքով տաղից: Տաղը 16 վանկանի քառանդամ (4+4+4+4) ոտանաւոր է, ուր առաջին անգամը յաճախ հանդէս է գալիս եռավանկ ոտք՝ քառամանակ տեւողութեամբ.

*Աւետիս քեզ, Տիրամայր՝
սրովբէաման, քրովբէթոռ,*

*Հուպ երրակի լոյս գերազանց,
լուսոյն արփի վեհինանեմ,*

*Սեռից ընթաց քիրուցն իջեալ
շողշողենի, փողփողենէջ,*

*Մանրահեղեղ, գաղտնի շաւիղ
անծանաթի ճանապարհին:*

(ԳՆՏԳ, 67)

Անթրի վանկական հաւասարութիւն ունի «Սէր յառաւստէ» մեղեդին: Այն գրուած է եռատող տեւորով: Առաջին եւ երրորդ տողերը քաղկացած են 5-վանկանի մէկ անդամից, 2-րդ տողը ունի 7 վանկ եւ երկանդամ տող է՝ 5+2 չափով: Հետաքրքիր է, որ 2րդ տողի առաջին 5 վանկանի անդամը այլ քան չէ, քան առաջին անդամի անփոփոխ կրկնութիւնը, որն առանձին երաժշտականութիւն է

տալիս մեղեդուն.

Սէր յառաւաւտէ,

Սէր յառաւաւտէ ճեմեալ

Իւր անձուկ ծագմամբ:

Ծագմանն արեւելք,

Ծագմանն արեւելք անուն

Այն արուսեկին:

Մի՞թէ յայն ի վայր վայրի

Տաւիղ տարածեալ:

(ԳՆՏԳ, 97-98)

Նարեկացին ունի հայրենի չափով գրուած տաղեր: Այդ չափի հնագոյն գործածութիւնը յայտնի է նրա ստեղծագործութիւնից: Արեղեանը գտնում է, որ դա բնիկ հայկական ոտանաւոր է եւ «շատ հնուց սիրուած է եղել մեր գուսաններից ու ժողովրդական երգիչներից եւ հայկական է համարուել, որ այդպէս «հայերէն», «հայրեն» է կոչուել (24), ինչպէս նաեւ՝ հայրենի կարգ: Նարեկացուց յետոյ այդ չափը լայն կիրառութիւն է գտել միջնադարեան տաղերգութեան մէջ: Հայրենը 15-վանկանի ոտանաւոր է՝ 7-8-վանկանի կիսատողերով, 7րդ վանկից յետոյ հաստատուն հատածով: Տողն ունի 2+3+2, 3+2+3 երկվանկ եւ եռավանկ ոտներ, գլխաւոր շեշտերն ընկնում են 5րդ, 7րդ, 10րդ եւ 15րդ վանկերի վրայ: Շեշտերն անտեսելու դէպքում, ինչպէս սխալ վարուել է Ռ. Պապայանը (25), տողը դառնում է 5-վանկ եռանգամ 5+5+5 ոտանաւոր: Տաղաչափական տեսակետից ոչ միայն կարելու է, որ կանոնաւոր լինեն 7-8-վանկանի կիսատողերը, այլեւ այն, որ այդ կիսատողերը կազմուած չլինեն 3+4, 4+4 կամ 4+3, 4+4 անդամներից: Հայրենի համար շեշտերի կանոնաւորութիւնն ունի կարելու դեր: Առաջին երկվանկ եւ երկորդ եռավանկ ոտները կարող են վերանել հնգավանկ անդամի, բայց 7րդ վանկից յետոյ պէտք է որոշակի լինի հատածը: Հայրենի անթերի տողը թաղկացած է վեց ոտից, գործնականում սակայն միշտ չէ,

որ պահպանուած է այդ կանոնաւորութիւնը:

Հայրենի չափով են գրուած Գրիգոր Նարեկացու «Տաղ Վարդավառին» եւ «Տաղ Սուրբ Խաչին» բանաստեղծութիւնները: Ահա մի հատուած Վարդավառին ձօնուած տաղից.

Գոհար / վարդըն վառ / առեալ //
ի վեհից / վարսից/ն արփենից.

Ի վեր / ի վերայ / վարսից//
ծաւալէր / ծաղիկ / ծովային:

Ի համատարած / ծովէն//
պըղպըջէր / գոյնըն / այն ծաղկին.

Երփին / երփնունակ / ծաղկին//
շողշողէր / պըտուղ/ն ի ճրդին:

(ԳՆՏԳ, 117-118)

Թէ «Տաղ Վարդավառին» եւ թէ «Տաղ Սուրբ Խաչին» բանաստեղծութիւնները հայրենի չափով գրուած կանոնաւոր ոտանաւորներ են: Մինչեւ այժմ այս տաղերը հրատարակուել են ըստ իս սխալ տողամուտով՝ կիսատողերը համարելով առանձին տողեր: Ելնելով դրանից, Բահաթրեանը այս երկու տաղերն էլ դասում է «երկանգամ անհամաչափ» եւ «անկանոն տողակարգ» ունեցող ոտանաւորների շարքը: (25) Մինչդեռ կիսատողերում կարող է խախտել ոտների, բայց ոչ անդամների վանկերի հաւասարութիւնը՝ չխախտելով գլխաւոր շեշտերի համաչափութիւնը: Այսպէս՝

Ես ծայն / գաղիծուն / ասեմ, //
սր գոչէր ի քառաթելին.

Ի Քառաթելին / գոչէր, // *ծայն*
առնէր ի սանդարամեստ:

(ԳՆՏԳ, 129)

Հայրենի այս առանձնայատկութիւնը՝ կիսատողի մէջ 5-ավանկ շեշտուած անդամ ունենալ, հնարաւորութիւն է տալիս ոտանաւորի մէկ այլ ձեւի, 14-վանկանի այնպիսի ոտանաւոր գրելուն, որի 7+7-վանկանի կիսատողերը ունենան 5-ավանկ անդամ եւ երկվանկ ոտ, այսպէս՝

Աւրիաս վաղաւէտ վճիռ. // սէր
համբերապատ մահին,

Մահինարողոջ ժամին, // ժամին
ժամանեալ աւուր:

(ԳՆՏԳ, 83)

Նարեկացիին հայրենի չափը գործա-
ծել է նաեւ կիսատողերի հակառակ՝ 8-7
դասաւորութեամբ՝ 3+2+3. // 2+3+2
անթերի չափով, ինչպէս նաեւ 3+5. // 2+5
կամ 5+3, // 5+2 տարբերակներով:

Ա. ՂԱԶԻՆԵԱՆ

ԱՆԿԻՆԵՐ ԵՒ ՊԱՆՈՅԱԳՈՒԹԻՎՆԵՐ

18.- Մարգարիտանի հայ բնակիչներին, հ. Է,
Երևան, 1971, էջ 42:

19.- Յ. Շողիկ, Արամեան իսկական գանձ,
Ամստերդամ, 1711:

20.- Ա. Բագրատունի, Քերականութիւն
գաղղիական. Վնտիկ, 1821, էջ 561:

21.- «Ինչպէս յայտնի է - գրում է լեզուարան էդ-
Աղայանը - հայկական տաղաչափութեան
մասնագէտները գտնում են, որ մեր ուսանողը
շեշտական է, եւ վանկիդի երկարութիւնն ու
կարճութիւնը նշանակութիւն չունեն, աւելի ճիշտ՝
վանկի իսկական երկարութիւն չկայ: Աշխարհարարի
վերաբերեալ սա անձխտելի նշմարտութիւն է: Ինչ
վերաբերում է գրարարին, ապա այստեղ վիճակը
բոլորովին այլ է: Երկարաբառների մէջ ... ոչ
վանկարար ձայնաւորը չի վերածուժ քաղաձայնի,
այլ արտասանում է սուղ, որով քաղաձայնի
վանկարունը իր տեղութեամբ հաւասարում է
երկու կարճ վանկի: Այս նկատի ունենալով, մենք
գտնում ենք, որ իմն հայկական տաղաչափութիւնը
ունիցիլ է նաեւ ամանակային քնոյթ» (էդ. Աղայան,
Կրթարարի քերականութիւն, Երևան, 1964, էջ
258-259):

22.- Մ. Արեղեան, հ. Ե, էջ 95:

23.- Ա. Բախարեան, նշվ. աշխ., էջ 47:

24.- Մ. Արեղեան, հ. Ե, 232-233:

25.- Р. А. Палаян. Древнесармянский стих (опыт
реконструкции) в кн.: Русская и армянская
средневековая литература", Л., 1982, с. 201.

ԵԿԵՂԵՑԻ

Համեցէք, մարդիկ,

Մտէք այս տունը:

Որի պատերի հիմքը ընկած է

Յիսուսի խաչին...

Իսկ շինամիւթը՝

Մարգարտահատիկ խօսքերն են Տիրոջ:

Պատերը՝ նրա Արդարութիւնը,

Շաղախը՝ Սէրը,

Որը եւ կապն է շէնքի ամրութեան...

Կառուցող Անձը՝

Օրհնեալ Սուրբ Հոգին:

«Յիսուս» է գրուած առաստաղին ու
Ջահերին կախուած...

Եւ կայ մէկ Աղբիւր,

Որի ճակատին մի գիր է գրուած.

«Յիշիր Գողգոթան...»

- Ով Տէր, մեզ գթա՛,

Հոգուդ գորութեամբ տար մեզ բոլորիս

Դէպի Դո տունը այդ նորակառոյց,

Որին կոչում ես Դու եկեղեցի...

Թող Լոյս եղիցի...

ՄԻՇԱ ՍՎԱՐԵԱՆ